ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Հաշվի առնելով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի>> 2018 թվականի ապրիլի 7-ի թիվ 81 դրական եզրակացությունն , անհրաժեշտ է Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողերի ժամանակավոր օգտագործման սխեմայում կատարել հետևյալ փոփոխությունը՝ Սիսիան համայնքի Անգեղակոթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0.025հա (կադաստրային ծածկագիր՝ 09-013-0084-0003) այլ հողերը փոխել որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողեր գործառնական նշանակությամբ՝ փոքր հզորության հիդրոէլեկտրակայանի ջրընդունիչի շինարարության համար:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

24.07.2018թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Սիսիան համայնքի ավագանու որոշման նախագծի հաստատումից հետո, համայնքային բյուջեի ծախսային մասում փոփոխություն չի կատարվի:

Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության
և տնտեսության ոլորտը համակարգող բաժնի պետ՝ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

24.07.2018թ